ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք,
գ. Գայ , Ա. Խաչատրյան-1, araks.armavir@mta.gov.am, 060 88 77 77

08 մարտ 2025

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Սիրելի՜ կանայք, մայրեր և քույրեր,

ջերմորեն շնորհավորում եմ ձեզ Կանանց միջազգային օրվա՝ Մարտի 8-ի կապակցությամբ: Մաղթում եմ ձեզ ընտանեկան ջերմություն և հաջողություններ: Թող ձեզ շրջապատող տղամարդկանց՝ ձեր հայրերի, ամուսինների, եղբայրների ու որդիների սերը, հոգատարությունն ու նվիրվածությունը դուք զգաք ու վայելեք տարվա բոլոր օրերին:
Սիրելի՛ մայրեր և քույրեր, ընտանիքին ու հայրենիքին ձեր նվիրումով են պահպանվում և սերնդեսերունդ փոխանցվում մեր ազգային ավանդույթները, ձեր հոգատար դաստիարակությամբ են հասակ առնում ազգի արժանավոր զավակները, որոնք մեր պատմության վճռորոշ հանգրվաններում իրենց սխրանքներով ու անձնազոհությամբ հերոսանում են հայրենյաց պաշտպանության սրբազան առաքելության մեջ: Խոնարհում և հարգանք որդեկորույս մայրերին. ձեր ավանդը մեր հայրենիքին անուրանալի է:
Ամենաջերմ մաղթանքներս զինվորների մայրերին, կանանց, դուստրերին, առանձնահատուկ ակնածանքի խոսքեր հայրենիքի պաշտպանությանը ծառայող մեր քույրերին:
Սիրելի կանայք, ևս մեկ անգամ շնորհավորելով գեղեցիկ այս տոնի կապակցությամբ, մաղթում եմ ձեզ քաջառողջություն, երջանկություն, աշխատանքային հաջողություններ, խաղաղություն և գարնանային բարձր տրամադրություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ